

թանին աւագանիին մէջ, որոնք արդէն Սերաստիայէն մեկնած էին երբ վերաշինութեանց ձեռնարկեց Ներսէս վարդապետ: Պէտք է, հետեւաբար, ենթադրել թէ սուլթանին մեկնումէն ետք, Սերաստիոյ մահմադարական իշխանաւորներէն ոմանք են որ զժողովութիւններ յարուցած են: Թերեւս այսպէս բացատրուին Մուրատի հրամանով, Յ Յուլիսին, էրզրումի մէջ Սերաստիոյ արէյլերպէի պոսնալը Օսման (կամ Ալի) փաշային, ինչպէս նաեւ Սերաստիոյ հարստահարիչներէն սիւրահի Ըշրէ Եահայի եւ անիշէրի Չափուչլատէ Սադապաշի սպանութիւնները ժողովուրդին բողոքին վրայ⁸:

Սուլթան Մուրատ Երեւանը եւ Թաւրիզը գրաւելէ ետք, Վան – Պիթլիս – Տիարպէ – քիր – Մալաթիա – Գանդալ – Սերաստիա ուղիով Պոլիս վերադարձաւ 25 Դեկտեմբեր 1635ին: Վերադարձին մէկ օր միայն մնաց Սերաստիա:

Սերաստիայէն առաջ բանակին հանդերձուաները եղած են Ալաճա-Հիսար, Գան-

դալ, Տէյիլմէն Քէօյիլ եւ Ճիսր-ի Հիսար⁹:

Գ. Սրուանձտեանց հետեւալ աւանդութիւնը լսած է Սերաստիոյ մէջ Ս. Սարգիս եկեղեցիին վերաշինութեան մասին. «Ներսէս վարդապետ Սոյո... Սեւաստ կը գրէր նուի, Օսմ. արքայն Սուլթան Մուրատ Դ-ին կը դիմաւորէ, անոր Բաղդատէ վերադարձին, Եկեղեցական հանդիսիւ: Օրհնութեամբ եւ ընծաներով, հաճութեան եւ մեծարանաց կ'արժանանայ մեր Հոգեւոր Տէրն, եւ կը պատմէ Ս. Լուսաւորչի դէպքը, ու կը խնդրէ որ իրեն շնորհուի: — Փոխանակ այս մէկին, եօթն եկեղեցի շինելու շնորհը կ'ընեմ քեզ, կ'ըսէ Սուլթանն. եւ ահա այն օրն կը շինուի անոր մօտ արդի Ս. Սարգիս եկեղեցին. այս առթիւ թաղուած էր սոյն եկեղեցւոյ մէջ մեր Հոգեւոր Տէր Ներսէսն, իսկ վեց եկեղեցիքն զեղերու մէջ շինուած են, ամենքն ալ Ս. Սարգիս անունով¹⁰:

Գեղեցիկ օրինակ մը թէ ինչ կ'արժեն աւանդութիւնները:

ՀԱՅԿ ՊԵՐՊԵՐԵԱՆ

8. Նախագ, Գ. էջ 250:

9. Ա. Սիւհեյլ Իւնվերի վերոյիշեալ յօդուածը, էջ 256:

10. Թորոս Աղբար, Ա. էջ 156:

Գ Ի Տ Ա Կ Ա Ն

ԲԺՇԿԱՊԵՏ ՄԻՔԱՅԷԼ ԱՐՍԼԱՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԱՍՏԵՂԱԳՆԱՅ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Յունուարի մէջ, Տոք. Սանտրոյ Սանտրելի տեսակցութիւն մը ունեցած է Բժշկապետ Միքայէլ Արսլանի հետ, որ ներկայիս իտալիոյ մէջ մեծագոյն ուսումնասիրողներէն մէկն է անգլալեզուային համալսարաններու՝ բնախօսական տեսակետներով: Իր այս տեսակցութիւնը հրատարակած է վեներիոյ *Gazzettino* լրագրին մէջ, որմէ կը բարգմանեմք ներկայ գրութիւնը (26. Ա. 1960. էջ 3):

Բոլոր բարդ գործիքներու մէջ, որոնք այս տարիներուս, այս ամիսներուս ուղղուած են տիեզերական անջրպետը գրաւելու, մարդը, ո՛չ մետաղէ, այլ ոսկրէ եւ միսէ կազմուած, եւ մանաւանդ ուղեղով, շիւղերով եւ զգայարաններով օժտուած, ամէնէն կատարեալն է, բայց միեւնոյն ժամանակ ամէնէն զգայունն ու դիւրաբեկը: Վարժեցման մարդը գրաւելու այդ միջոցը, որ զինքը այնքան կ'առիւնքէ, դիւրին գործ մը չէ. յետ մեծամեծ արբանեակներու, յետ բարձրագոյն կարգի անասուններու, ամէնէն վերջ՝ միջոցի ասպարէզին վրայ պիտի երեւի նաեւ մարդը:

Արդեօք ասիկա իրական գրաւում մը պիտի ըլլայ, թէ համառօտ թուի՞ր մը, որքան ալ հերոսական, քանի մը յանդուգն եւ խիզախ հերոսներու կողմէ, խմբակի մը՝ որ կը սկսի աւանդալէպերու ժամանակէն Պրոմիթեոսով եւ Իկարով: Ուղեցինք այցելել այն սակաւաթիւ անձներէն մէկուն՝ որ այսօր իտալիոյ մէջ ամէնէն նշանաւոր հեղինակութիւններէն մէկն է՝ միջոցային բժշկութեան, Ուսցչալ. Միքայէլ Արսլանի, որ Փատովայի Համալսարանի Ականջ-ուռնդ-կոկորդարութեան մաս-

նաճիւղի վարիչն է: Ուսցչալ. Արսլան երեսուն տարիէ ի վեր կ'ուսումնասիրէ մարդկային լաբիրինթոսը, որ հաւասարակշռութիւնը պահելու պաշտօնն ունի:

ԱՆՋՐՊԵՏԱՅԻՆ ՓՈՐՁԱՌՈՒԹԻՒՆ

«Մարդը, ինչպէս ուրիշ որեւէ մարմին, որ այս երկրիս վրայ կը գտնուի, ինչպէս քար մը, ինչպէս որեւէ անկենդան մարմին մը – սկսաւ Ուսցչալ. Արսլան – բնական զիտութեան աչքով զիտուած՝ ծանրութիւն մըն է. այսինքն՝ ձգողութեան օրէնքներուն ենթարկուած մարմին մը: Այն կը ծնի եւ իր ամբողջ կեանքը կ'անցընէ միջավայրի մը մէջ՝ որ ամբողջովին ենթարկուած է այս օրէնքներուն, եւ աւելի ալ, որովհետեւ ան բոլոր կենդանի էակներու մէջ՝ ամէնէն շատ կը զգայ այս ոյժը, ըլլա՛յ նիւթապէս, ըլլա՛յ նաեւ որոշ կերպով մը՝ հոգեբանապէս: Դարերէ ի վեր, հաղարաւոր տարիներէ ի վեր, մարդկութիւնը ապրած է միշտ այս միջավայրին մէջ, ուր կայ վեր եւ վար, աջ ու ձախ կողմ մը: Երկրէն դուրս անջրպետը, աստեղանաւերու կամ արուեստական արբանեակներու սենեակը, ուր ծանրութեան

ոյժը գոյութիւն չունի, մարդուն համար բոլորովին նոր միջավայր մըն է, որուն չէ վարժած իր մարմինը, զգայարանները, եւ մասնաւորապէս հաւասարակշռութեան զգայարանը: Անդունդներու ձուկերը բոլորովին յարմար կազմ մը ունին այդ միջավայրին՝ որուն մէջ կ'ապրին. եթէ արագօրէն մակերես բերնը զանոնք, ուր բոլորովին տարբեր միջավայր մը կը տիրէ, կը պայթին՝ ճնշումի սաստիկ փոփոխութեան հետեւանքով: Ծանրութեան պակասութիւնը՝ մարդու համար՝ Փիլիքականէն աւելի զգայական եւ հոգեբանական փտանդ մը կը ներկայացնէ, եւ այդ անհաճոյ զգացումին պիտի աւելնայ տրեւորութեան, օտարացումի, ունայնացումի զգացում մը »:

ԱՆՀՐԱԾԵՇՏ ՀՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

Հարց. — « Բայց արդեօք կարելի պիտի չըլլա՞յ առակ հրահանգումներով վարժիլ: Արդեօք Ամերիկայի եւ Ռուսաստանի մէջ անթիւ փորձեր չէ՞ որ կը կատարուին այս ուղղութեամբ »:

« Կախում ունի հրահանգումներու տեսակէն. կարելի է յարմարիլ տարբեր սընդակաւաններ, տարբեր երկրի, տարբեր բարձրութեան, բայց միշտ մնալով երկրային միջավայրի մէջ: Կարելի չէ խօսիլ բառին զուտ իմաստով անջրպետային միջավայրի յարմարութիւն մասին. պէտք է խօսիլ, եւ հոս կ'ուզեմ ակնարկել ծանօթ Մերֆիլի ծրագրին, որ երեք տարիէ ի վեր կը գործադրուի Ամերիկայի մէջ, այն կարեւորութեան մասին, զոր մարդը կը ստանայ կամքի ոյժով եւ յամառ դիմադրութեամբ՝ որոշ բնականոն ձեւով մը ապրելու երկրի միջավայրէն դուրս: Ուշադրութեամբ կը հետեւեմ այս ծրագրի իրագործումին, եւ նկատած եմ որ ամէն փորձէ վերջ, օրինակի համար՝ Ամերիկեան մեծ կեդրոնախոյաներու մէջ, վարիչները սաստիկ յոգնութեան մը կ'ենթարկուին եւ երկար ժամանակ ստիպուած են անկողին մնալու: Մարդու մարմնին համար չկայ իսկապէս յարմարութիւն կերպ՝ անջրպետային նորո-

րինակ պայմաններու. ապապայի անջրպետային սաւառնորդները, զանազան փորձերու շրջանին, բացի Փիլիքական ճիւղերէ՝ զգացողութեան եւ հոգեբանական զգալի խանգարումներ յայտնաբերած են. ծովու հիւանդութիւն (որուն կը յաջորդէր ընդհանուր անտարբերութիւն մը՝ որեւէ զգացումի հանդէպ), տխրութիւն, վտարանջութեան ախտանշաններ. հետեւանք միայնութեան, որուն անշուշտ պիտի ենթարկուին անջրպետային առաջին աստեղանաւորները. մէկ խօսքով՝ ունայնացումի բոլոր ախտանշանները: Մարդու կազմը ցոյց տուած է թէ ամենեւին ի վիճակի չէ յարմարելու իր իր բնական վիճակին. ժամ մը տեւող փորձը՝ կեդրոնախոյանի մէջ՝ յոգնութիւն եւ ապշեցում կը պատճառէ: Եթէ նկատի առնենք որ միջոցային ճամբորդութիւնները պիտի տեսնեն օրերով, շաբաթներով, ամիսներով, մարդու տեղաւոր կարողութիւնը իր վերջին սահմանին պիտի հասնի, եթէ նոյնիսկ առաջին աստեղանաւորները ըլլան յանդուրձաններ, կամ մինչեւ իսկ յիմարներ »:

ԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԱՐԲԱՆԵԱԿՆԵՐ

Հարց. — « Ուրեմն դուք աւելի տարակուսակա՞ն կը նկատէք որ մարդս կարեւայ տեսակաւորէն գրաւել անջրպետը »:

« Այո՛ եւ ոչ. անմիջական իրական եւ իսկական դրաւում մը չեմ կարծեր որ կարելի ըլլայ: Գերազանցել արդէնքները, որ մարդու կողմէ յարմարելու կարողութեան անկարելիութենէն առաջ կու գան, մասնաւորապէս ծանրութենէ զուրկ ըլլալը, դիտութեան ուրիշ եւ աւելի մեծ յաղթանակներով միայն կարելի պիտի ըլլան: Ամէնէն զգուշացնելու ամենաբարձր միջոցը միշտ աւելի կատարեալ միջոցներ, որով աստեղանաւոր սաւառնակները կարենան շատ աւելի աստիճանաւոր եւ երկարատեւ երազացումով մեկնիլ: Յետոյ արուեստական բնակելի արբանեակներ հարկաւոր են, որոնց մէջ ապապայի աստեղանաւոր ճամ-

բորդները կարենան աստիճանաբար վարժիլ, երկու երեք շաբաթ, այդ նոր միջավայրին. ասիկա պիտի ըլլայ բնական հրահանգում մը, նաեւ աստիճանաբար աճող ծանրութեան վիճակի մէջ, տալով թաւալական շարժում մը՝ որ կեդրոնախոյան ոյժ մը առաջ բերէ. երկրի վրայ հրահանգումները, այսօր, հրթիռներու կամ զուգորդական թռիչքով սաւառնակներու մէջ, շատ կարճատեւ են: Յետոյ, երբ դիտութիւնը իրագործէ միշտ աւելի մեծ արբանեակները ծիրի մէջ դնել՝ կարելի պիտի ըլլայ անոնց մէջ, յատուկ կահաւորումով պատրաստուած հիւանդանոցներու մէջ կեանք տալ նորածին մանուկներու, որոնք սահմանուած պիտի ըլլան միշտ միջոցին մէջ ապրելու, այսինքն՝ որոնք իրենց ամբողջ կեանքի շրջանին եւ յատկապէս իրենց փոքր հասակին, աստեղային միջոցը իր իրենց հայրենիքը պիտի նկատեն, յաղթելով օտարացումի եւ ունայնացումի զգացումներուն: Բնականաբար երկար ժամանակի մասին է խօսքս... »:

« Ուրիշ եղանակ մը՝ հակադրելու համար աստիկ երազացումի աղբյուրութեան, Ռուս Զիլբերդիի ծրագրին է, ընկղմել միջոցային սաւառնորդները ջրով լեցուն աւազաններու մէջ՝ ամէնէն աստիկ երազացումի շրջանին, այսպէս նուազեցնելով միջոցի աստիկ ոյժը դէպի վար, Արքիմեդէսի օրէնքին համաձայն »:

« Հետաքրքրական ծրագիր մըն է, թէեւ զործնական մեծ դժուարութիւններ ալ ունենայ: Բացի ասկից՝ իրաւացիօրէն չեւտեց Ուսցչալ. Արսլան — ասիկա ծրագիր մըն է, որ արդէն իրմէ առաջ մեր մօտ աշխատասիրուած եւ փորձուած է Միլանի մէջ Ուսցչալ. Մարկարիայէն, որ մեծադոյն ուսումնասիրողներէն մէկն է Իտալիոյ մէջ անջրպետային բնախօսութեան հարցերուն: Այս ուսումնասէրներու կարգին՝ պէտք է յիշենք նաեւ Հոռմի Զօրավար Լոյ Մոնաքոյ, որ այս խնդիրներով կը զբաղի դիտորդական օդանաւային տեսակետով, նորագոյն կեդրոնախոյանի մը վրայ փորձեր կատարելով »:

« Իսկ երբ մարդը սորված ըլլայ միջոցը կտրել եւ յաջողի միւս մոլորակներուն վրայ ոտք դնել, բացի այն դժուարութիւններէն՝ որոնք կրնան իրեն պատահիլ կենդանի կամ անկենդան թշնամիներու հանդիպելով հոն, կը վարժէ՞ք թէ պէտք պիտի ըլլայ դեռ յաղթելու նաեւ իր հոգեբանական տկարութիւններուն ալ »:

« Չեմ կարծեր: Անջրպետային սաւառնակի մը մէջ, զոնէ առաջին շրջաններուն, մարդիկ պիտի հանդիպին երկու մեծ վտանգներու, ծանրութեան պակասին եւ գրեթէ բացարձակ անզործութեան: Բայց նոր մոլորակի մը մակերեսին վրայ՝ ծանրութեան ոյժը դարձեալ զգալի պիտի դառնայ, պիտի վերադառնան օրն ու գիշերը, երկնքի միապաղաղ տեսարանի փոխարէն՝ նոր աշխարհի մը բոլորովին նոր տեսարանները պիտի յաջորդեն, եւ նոր մոլորակներու ռահվիրաներու նիւթական ու նաեւ մտաւոր աշխատանքը պիտի աւելնայ »:

Հարց. — « Գիտեմք, Ուսցչալ. Արսլան, թէ դուք յարաբերութեան մէջ էք աշխարհի զանազան ուսումնասիրողներու հետ, եւ թէ Ամերիկայէն՝ հրաւեր ստացած էք միշտ աւելի սերտ աշխատակցութեան մը, կարելի եղածին չափ, Ատլանտիկի միւս ափին վրայ »:

« Բոլորովին այնպէս չէ: Իմ գիտական աշխատութիւններու համար միշտ շատ հրաւերներ ընդունած եմ: Միւս կողմէ, Ամերիկացիները միշտ պատրաստ են աշխատակցութիւնը ընդունելու ունէ մէկուն՝ որ իրենց օգտակար օժանդակ մը կարենայ հանդիսանալ: Եթէ աշխատելու համար ընդունէի Ամերիկա երթալ, վարձեմ, անոնք ուրախ պիտի ըլլային, մինչեւ իսկ երբ ինծի ոչ մէկ պաշտօնական հրաւեր եղած ըլլայ: Ներկայիս, գիտական պրպտումներ կը կատարեմ երազացումի ենթարկուած մարդկային կազմին վրայ, հաւասարակշռութեան մեծ հարցին մասին, եւ մարմնի եւ անդամներու բնական զիրքի մասին՝ սովորականէն դուրս ծանրութեան պայմաններու տակ: Այս

հարցերու շուրջ՝ յարաբերութեան մէջ եմ ուրիշ բնախօսներու հետ ալ, յատկապէս Վիեննայի Ուսցչալ. Շուպէրթի հետ »:

Հրց. - « Ձեր փորձերու, ինչպէս նաեւ Ամերիկայի մէջ կատարուած փորձերու մասին դուք ժապաւէն մըն ալ պատրաստած էք, որ գիտական ժապաւէններու ցուցահանդէսներու մրցանակներ ալ շահած էք Փատովա, Քան, Փարիզ »:

« Այո՛, բայց կարելի է լաւագոյնն ալ ընել: Ո՛վ գիտէ, թերեւս յաջորդաբար, երբ խուզարկութիւններու ուրիշ շրջան մըն ալ կատարած ըլլամ՝ Քորիոլիսի երազացումներու բնախօսական հետեւանքներու խնդիրներու վրայ... »:

Եւ այս խոստումով մեր տեսակցութիւնը վերջացաւ: Ուսցչալ. Արսլան, այս չըջանիս, որ այնքան հարուստ է անջրպետային փորձերով, քիչ մը ինքն իր վրայ առած է Սատանայի փաստաբանին դերը: Հարցը շատ կը հետաքրքրէ զինքը եւ ինքը կը դրաղի անոնցմով տեսականապէս եւ մասնաւորաբար փորձառապէս՝ իր գիտնականի համբաւին արժանաւայել բարձրութեամբ: Եւ նոր, խիղախ եւ անակնկալ յաղթանակի ասպարէզին մէջ՝ գիտութեան եւ մարդու ոգեւորութեան եւ յանդիմութեան պէտք է անպայման միանայ չափաւորութիւնը, փորձառութիւնը, գիտակցութիւնն ու տարակոյսն ալ:

Թ Ո Վ Մ Ա Յ Ի Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

(ԵԳԻՊՏՈՍԻ ՆՈՐԱԳԻԻՏ ՊԱՊԻՐՈՍՆԵՐԸ)

(Շար. տի՛ս «Բազմավեպ» 1959, թ. 11-12, էջ 254)

Աստուածաբանի մը կարծիքը

Վերին Եգիպտոսի մէջ յայտնաբերուած պապիրոսները, մասնաւորապէս Թովմայի Աւետարանը մեծ հետաքրքրութիւն կ'արթնցնեն գիտական աշխարհի մէջ. ու առավ կը դրաղին նոյնիսկ այնպիսի անձեր՝ որոնք շատ ընտանի չեն Աւետարանի մասին կամ քրիստոնէութեան սկզբնական շրջանին շուրջ տեղի ունեցող հարցերուն:

Աստուածաշնչական հարցերը նուրբ եւ բարդ են յաճախ. նոր բնագրի մը գիմաց՝ իսկոյն կը ներկայանան բազմատեսակ խնդիրներ՝ պատմական, գրական, մեկնաբանական եւ վարդապետական, որոնց լուծումը միշտ դիւրին չէ եւ ամէնուն կողմէ հաւանութիւն չի գտներ:

Մեկնութիւնները՝ որ կը տրուին զանա-

զան մասնապէսներու կողմէ, յաճախ տարակոյսներ կը յարուցանեն ընթերցողին մտքին մէջ: Այս տեսակէտով՝ օգտակար կը դատենք կարգ մը նկատողութիւններ, իրր ընդհանուր ուղեգիծ մեր բռնելիք գիրքին՝ նման յայտնութիւններու գիմաց:

Աւետարանները

Ծանօթ է որ չորս հատ են Աւետարանները, ոչ աւելի, եւ ոչ նուազ, եւ անոնց հեղինակներն են Ս. Մատթէոս, Ս. Մարկոս, Ս. Ղուկաս, Ս. Յովհաննէս:

Սակայն, Քրիստոսի մասին առաջին դարուն իսկ զրի առնուած պատմութիւնները շատ աւելի բազմաթիւ են:

Եկեղեցական լեզուով՝ առաջինները կը կոչուին կանոնական գրքեր, երկրորդն-

ը՝ անվաւերական գրքեր: «Կանոնական» բացատրութիւնը ցոյց կու տայ որ զիրք մը դասուած է սրբազան մատեաններու պաշտօնական ցանկին մէջ, այսինքն՝ այդ գիրքը աստուածային ներշնչութիւնով կամ Աստուծոյ լուսատու աղբեցութեան տակ զրի առնուած է, այնքան որ անոր իսկական հեղինակն Աստուած է եւ կը պարունակէ Աստուծոյ խօսքը: Ահա թէ ինչո՛ւ այդ գիրքը «կանոնական» է. կանոն է հատուկ եւ բարոյականի: Իրրեւ «կանոնական» ընդունուած են այդ գրքերը Քրիստոսէ իսկ կամ Առաքեալներէն:

Անվաւերական գրքերը

Անվաւերական են այն գրքերը, որոնք կը ձգտին նմանիլ՝ պարունակութեամբ եւ ձեւով՝ վերոյիշեալ սրբազան մատեաններուն, բայց Ս. Եկեղեցին չ'ընդունիր զանոնք իրրեւ իսկական ներշնչեալ գրքեր, չ'ընդունիր իրրեւ Աստուծոյ խօսքը պարունակող վաւերական գրքեր: Ընդհանրապէս աղանդաւորներու մօտ գործածուած դադտնի գրքեր էին ատոնք. եւ «անվաւերական» բացատրութիւնը միշտ ալ վատ իմաստ մը ունեցած է, հետաքրքրական, աղանդաւոր:

Ինչպէս «կանոնական» գրքերուն, այսպէս նաեւ այս «անվաւերական» գրքերուն համար ալ կարեւոր երկու հարցեր կան քննելիք. պատմականութիւն եւ հարադատութիւն:

Հարադատութեան հարցը

Գիրք մը հարադատ է, երբ իրապէս գրուած է այն հեղինակէն՝ որու կը վերագրուի աւանդութենէն. իսկ եթէ անծանօթ է հեղինակը՝ գոնէ ժամանակաշրջանը ծանօթ ըլլալու է: Հարադատութիւնը կը դրաղի գրքին մարդկային ծագումով, եւ կանոնականութենէ կամ աստուածային ներշնչութենէ տարրեր է: Եթէ նոյնիսկ, առաջին Աւետարանը գրուած չ'ըլլայ Ս. Մատթէոսի կողմէ, այնուհանդերձ ան կը մնայ միշտ ներշնչուած սրբազան մատեան:

մը, որու իսկական հեղինակն է Աստուած: Բայց Աւետարաններուն համար՝ շատ յայտնի ու փաստուած է որ գրուած են երկու Առաքեալներէ (Մատթէոս, Յովհաննէս) եւ Առաքեալներու անմիջական երկու աշակերտներէ (Մարկոս, Ղուկաս):

Իսկ անվաւերական գրքերու հեղինակներու մասին ոչ մէկ բան յայտնի է. անոնց անունը ծանօթ չէ, եւ գործը ընդհանրապէս առաքեալի մը վերագրուած է, Քրիստոսի մէկ աշակերտին անունով՝ ծաւալելու համար յաճախ ոչ ուղղափառ դադափարներ եւ Քրիստոսի վրայ տարտամ տեղեկութիւններ, որոնց մասին կանոնական Աւետարանները կա՛մ ամենեւին չեն խօսիր, կամ ալ հաղիւ ակնարկներ ունին:

Նորութիւններու հարցը

Չորս Աւետարաններուն մէջ, արդարեւ, նոյնինքն հեղինակներու վկայութեամբ, Քրիստոսի բոլոր խօսքերն ու գործերը զրի առնուած չեն: Յովհաննէս Աւետարանիչ, որ գրած է առաջին դարու վերջերը, հետեւեալ բառերով կը փակէ իր Աւետարանը. « Բայց դեռ ուրիշ շատ գործեր ալ կան՝ զոր կատարեց Յիսուս, որոնք եթէ մէկիկ մէկիկ զրի առնուէին, կարծեմ թէ աշխարհս ալ բաւարար պիտի չ'ըլլար պարունակելու այն գրքերը, եթէ գրուած ըլլային »:

Անկարելի չէ որ այս գործերէն մաս մը զրի առնուած ըլլան անվաւեր Աւետարաններու մէջ: Եւ այս է պատճառը, լուրջ պատճառը, որ մեզ կը մղէ ուսումնասիրելու այդ անվաւերական գրքերը: Բնականաբար հարցը աւելի հետաքրքրական կը դառնայ, երբ խնդիրը Քրիստոսի կարգ մը խօսքերուն վրայ է, որոնք Աւետարաններուն մէջ չեն ներկայացուած: Այսպիսի խօսքերէն մէկն է, զոր կը յիշատակէ Պոլոս Առաքեալ (Գործք. Առ. Ի. 35). «Երանելի է մահաւանդ տալը քան առնելը»: Աւետարակոյս, այս խօսքերը արտասանած է ինք Քրիստոս, քանի որ Առաքեալն է որ կը վկայէ, Աստուծոյ ներշնչուած: